Ողջույններ ՎԱՆՈՒԱՏՈՒԻՑ

Վանուատուն արևադարձային կղզի երկիր է Խաղաղ օվկիանոսում: Այնտեղ բնակվում է ավելի քան 300 հազար մարդ:

Մորմոնի Գիրքը թարգմանվել է բիսլամերենով 2004 թվականին: Այդ ժամանակից ի վեր ևս մոտ 8,000 մարդ է միացել Վանուատուի եկեղեցուն:

ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ

Եկեղեցու անդամները Վանուատույում 2017 թ. օգոստոսին մասնակցում են Երեց Գարի Ի. Սթիվենսոնի հետ հոգևոր հավաքին:

ԱՐԵՎԱԴԱՐՁԱՅԻՆ ԿՂԶԻ

Վանուատուն հայտնի է իր գեղեցիկ ծովափներով և մաքուր կապույտ ջրով: Որոշ ծովափներ ունեն նույնիսկ սև ավազ:

ԳՈՒՆԱՎՈՐ ՓՈՂ

Վանուատույում վառ գույներով փող կա, որը ցույց է տալիս կղզիների կյանքի տեսարանները և այնտեղ ապրող բույսերն ու կենդանիները

ԼԵԶՈՒ

Բիսլամերենը, անգլերենը և ֆրանսերենը պաշտոնական լեզուներն են: Գրեթե բոլորը խոսում են բիսլամերեն:

ՎԵՐՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱՄԻՐ

Ծաղկեպսակներ

Փառատոնների և արարողությունների ժամանակ Վանուատույում մարդիկ գունավոր ծաղկեպսակներ են կրում:

Գունավոր թուղթը կտրեք ծաղիկների ձևերով: Յուրաքանչյուր ծաղիկի մեջտեղում մի փոքր անցք արեք: Կտրեք **մի լար** այնքան երկար, որ փաթաթեք ձեր գլխին: Թելն անցկացրեք թղթե ծաղիկների միջով ամրացնելով լարի վրա: Այնուհետև կապեք լարի ծայրերը միմյանց:

Ձեր պսակը պատրաստ է կրելու համար:

Կոկոսով տորթ

Կոկոսով տորթը Վանուատույում տարածված հյուրասիրություն է: Ահա մի բաղադրատոմս, որը կարող եք փորձել:

1. Հարել **½ բաժակ շաքարավազը** և **¾ բաժակ հալած կարագը** թասի մեջ:
2. Ավելացնել **2 ձու** և խառնել:
3. Խառնել **½ բաժակ ալյուրը, 1 բաժակ քերած կոկոսը** և **1 թեյի գդալ փխրեցուցիչը**:
4. Լցնել տորթի կլոր յուղած ամանի մեջ և թխել 20 րոպե 300°F (150°C):

Անպայման դիմեք մեծերի օգնությանը: